ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/205

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24150-18 գրությամբ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.12.2018թ. թիվ 08/15.3/19824-18 գրության հիման վրա, 25.12.2018թ. Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 14.12.2018թ. թիվ 08/15.3/19824-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է թիվ ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրերով գնման ընթացակարգեր:

Գնահատող հանձնաժողովի կողմից հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ի պատասխան վերոնշյալ հարցմանը 01.11.2018թ. ստացվել է եզրակացություն, որի համաձայն Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ, որը պակաս է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջներով, կից Ձեզ ենք ներկայացնում անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան ընթացք տալու համար:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

3. <u>Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.12.2018թ. գրությամբ դիմել է Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24150-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ա/Ձ-ի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24150-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 14.12.2018թ. թիվ 08/15.3/19824-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրերով գնանշման հարցման հրավերները (այսուհետ՝ նաև Հրավեր), ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրերով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3, 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5, 19.10.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3, 19.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3, 13.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6, 17.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 և 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, Ընկերության կողմից ընթացակարգերին ներկայացված մասնակցության հայտերի պատճենները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ139+000-142+000 հատվածի հիմնանորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ75+500-կմ79+000 հատվածի հիմնանորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ107+900-կմ109+000 հատվածի հիմնանորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգման, Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման մետաղական արգելափակոցների տեղադրման 15 կմ երկարությամբ, Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ32+888-33+628 և կմ52+970-կմ53+350 փլուզված հատվածներում գաբիոնային հենապատերի կառուցման, Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս կմ53+400-53+800 հատվածի ասֆալտապատման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ7+000-կմ8+400 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ12+560-կմ13+900 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ21+940-կմ24+700 հատվածի հիմնանորոգման, Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 կմ41+900-կմ46+400 հատվածի հիմնանորոգման, Հ-36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ7+500-ում փլուզված հատվածի վերականգման ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնքի 2,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիր Աղբյուր համայնքի 5,7 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Բերդավան համայնքի ներհամայնքային երկու փողոցների 2,1 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Մ16-Բերքաբեր ճանապարհի 4,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր Աղբյուր համայնքի 1,65 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 2,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման, ՀՀ Տավուշի մարզի Նորաշեն-Չորաթան ճանապարհից դեպի ձեռնոցի գործարան տանող ճանապարհի, ՀՀ կոտայքի մարզի Կամարիս համայնքի 1,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը:

Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի.

- N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը՝

- 19.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի կողմից ներկայացված Հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել է Հրավերի պահանջներին համապատասխան:

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 67-րդ կետը, 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշել է հարցում է ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 2000 ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

- նույն արձանագրության 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրած եզրացությունը, որոշել է Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ126+100-

կմ131+500 հատվածի հիմնանորոգման, Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ13+500-կմ22+400 հատվածի հիմնանորոգման, Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ22+400-կմ33+500 հատվածի հիմնանորոգման և Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ 0+000+կմ5+000 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը:

Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի.

- N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը՝

- 19.10.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի ա) ենթակետով Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի կողմից ներկայացված Հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել է Հրավերի պահանջներին համապատասխան:

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 67-րդ կետը, 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշել է հարցում է ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 2000 ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

- 13.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով, հիմք ընդունելով 01.11.2018թ. տրամադրած եզրացությունը, որոշել է Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ՝ Մ-1, Երևան-Աշտարակ-Գյումրի-Վրաստանի սահման, կմ148+300-կմ152+400 առանձին հատվածների անցանելիության ապահովման (Աշոցքի տարածաշրջան, դեպի Բավրայի անցակետ տանող հատված), Մ- 4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման, կմ 67+500 փլուզված հատվածի վերականգնման (գաբիոնային շարվածք) (Սևանի տարածաշրջան), Մ- 4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման, կմ 88+500 փլուզված հատվածում ե/բ հենապատի կառուցման (Դիլիջանի ոլորաններ), Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6, կմ33-ում վթարված խողովակի վերականգնման (Նոյեմբերյանի տարածաշրջան, Բաղանիս-Ջուջևան հատված), ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանման միջպետական ճանապարհներին (Մ-2 և Մ-17) թվով 5 հսկիչ կետերի ճանապարհային կահավորանքի տեղադրման , Հ-3, Երևան-Գառնի-Գեղարդ ավտոճանապարհի 35-րդ կմ հատվածում հարկադիր քարաթափման աշխատանքների իրականացման, Հ-4, Երևան-Եղվարդ-Արագյուղ-Հարթավան-Մ-3 կմ 35.1-ում վթարված ստորին հենապատի վերականգնման, Հ-21, Հոռոմ-Արթիկ-Ալագյազ ավտոճանապարհի Հառիճ համայնքում վթարված խողովակի վերականգնման, Հ-30, Մ4-Ճամբարակ-Դրախտիկ-Մ14 հարկադիր քարաթափման աշխատանքների (Ձորավանք-Մարտունի համայնքների տարածք), Հ-40, Արենի-Խաչիկ-Գնիշիկ-Եղեգնաձոր ավտոճանապարհի Գնիշիկ-Ագարակաձոր առանձին հատվածների անցանելիության ապահովման (Եղեգնաձորի տարածաշրջան), Հ-75, Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի առանձին հատվածների անցանելիության ապահովման (Անիի տարածաշրջան) նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների նպատակով հայտարարվել է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն

ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը:

Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի.

- N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը՝

- 17.10.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի դ) ենթակետով որոշել է Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին 1-րդ, 4-րդ, 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 67-րդ կետը, 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշել է հարցում է ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 2000 ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 0 ՀՀ դրամ:

- նույն արձանագրության 1-ին կետով, հիմք ընդունելով 01.11.2018թ. տրամադրած եզրացությունը, որոշել է Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

- 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն սույնհրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության

արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:
- 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am,

gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

• 2.5 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության

արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի՝ 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 6-րդ հոդվածի՝ 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի հայտը ներկայացնելու օրվա (14.10.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 2000 ՀՀ դրամ:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.11.2017թ. տրված եզրակացության համաձայն՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի հայտը ներկայացնելուն օրվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 0 (զրո) ՀՀ դրամ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանը նշված ընթացակարգերին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի համապատասխան հավելվածներով՝ հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/7Ն, ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն և ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/9Ն ծածկագրերով գնանշման հարցման հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24150-18 գրությամբ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ